



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար

Հակոբ Սիմիդյան

«13» 06 2025թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 174 - 25

Նախաձեռնող՝

«ԿԱՐԾՐԱՔԱՐ» ՍՊԸ

Երևան, Խորենացու փողոց, պոստ 221/36

Գործունեությունը՝

Բալահովիտի բազալտի հանքավայրի Հարավային
տեղամասի երկրաբանական ուսումնասիրություն
Կոտայքի մարզ

Առդիր՝ 6 թերթ

Երկրաբանահետախուզական աշխատանքները նախատեսվում է իրականացնել երկրաբանահանույթային, սյունակային հորատման, փորձնական բացահանքերի անցման, փաստագրման և նմուշարկման աշխատանքների համալիրով:

Կետի հերթակա ն համարը	Կոորդինատները	
	X	Y
Բլոկ-1, $S \approx 11.58\text{հա}$		
1.	4454794.6136	8466690.3271
2.	4454797.0390	8466989.7036
3.	4454718.0308	8467145.7582
4.	4454597.0458	8467217.8884
5.	4454597.0458	8467116.0559
6.	4454520.4347	8467115.6926
7.	4454458.7457	8466852.8757
8.	4454400.2477	8466757.7030
9.	4454542.6999	8466790.3479
10.	4454704.4922	8466773.8000
1.	4454794.6136	8466690.3271

Կետի հերթակա ն համարը	Կոորդինատները	
	X	Y
Բլոկ-2, $S \approx 5.56\text{հա}$		
1.	4454521.3792	8467189.6373
2.	4454529.3440	8467292.1257
3.	4454583.6149	8467458.2302
4.	4454683.5218	8467580.3968
5.	4454556.8562	8467619.1359
6.	4454476.1623	8467488.1933
7.	4454406.2439	8467373.6555
8.	4454347.3167	8467270.1299
1.	4454521.3792	8467189.6373

Հորատման աշխատանքներն իրականացվելու են սյունակային հորատման ուղղաձիգ հորատանցքերի հորատման միջոցով: Հորատումը կատարվելու է կարծր համաձուլվածքային թագիկներով՝ 112-96 մմ տրամագծով: Նախատեսվում է հորատել մինչև 55.5 մետր խորության 21 հորատանցքեր (726.5 մետր ընդհանուր խորությամբ), հորատահանուկի նվազագույն ելքը՝ 80-85%: Հորատվող ապարները համապատասխանում են IV-րդ, VII-րդ և VIII-րդ կարգերին: Հորատման ծավալների մոտավոր բաշխումն ըստ հորատելիության կարգերի, ներկայացված է ստորև.

- հողաբուսական շերտ բազալտների տարաչափ բեկորներով -- IV կարգ – 10.5 գծ.մ,
- հողմահարված, ջարդոտված բազալտներ - VII-րդ կարգ – 31.5 գծ.մ,
- թարմ բազալտներ – VIII կարգ – 684.5 գծ.մ:

Նախատեսվում է 21 հետախուզական հորատանցքերի հորատում, ինչի նպատակով կատարվելու է հորատող հաստոցի 21 տեղակայում և տեղահանում:

Մանրամասն երկրաբանական փաստագրման ենթակա են հորատանցքերի հորատահանուկը և փորձնական բացահանքերը: Երկրաբանական փաստագրման աշխատանքները նախատեսվում են կատարվել 1:100 մասշտաբով: Այդ աշխատանքների ծավալները հետևյալն են՝ ըստ տեսակների.

- հորատահանուկի փաստագրում – 726.5 գծ.մ,
- փորձնական բացահանքեր - 52 գծ.մ:



Թարմ բազալտների ուսումնասիրության նպատակով նմուշարկումն իրականացվելու է հորատանցքերի հորատահանուկից և փորձնական բացահանքերից:

Օգտակար հանածոյի ֆիզիկամեխանիկական հատկությունները որոշելու նպատակով նախատեսվում է.

-հորատանցքերը նմուշարկվել ընդհատվող տիրույթներով, հորատահանուկի նմուշների սեկցիայի երկարությունը մինչև 5 մ, հանուկային նմուշների ընդհանուր քանակը կկազմի 144 նմուշ,

- կատարվել փորձնական արդյունահանում բացահանքերից՝ ընդամենը 240 խ.մ., որից 150 խ.մ թարմ բազալտներ:

Թարմ բազալտների քիմիական կազմը որոշելու նպատակով նախատեսվում է վերցնել 6 նմուշ, պետրոգրաֆիական կազմի ուսումնասիրման նպատակով՝ 6 նմուշ:

Փորձնական բացահանքերի անցման ժամանակ փուլտա շերտի առաջացումներից կազմվելու է 2 համախառն նմուշ (մեկական յուրաքանչյուր բացահանքից), ընդամենը մոտ 50 կգ քաշով, ինչն ուղարկվելու է լաբորատոր փորձարկումների՝ ջարդոտված բազալտները որպես շինարարական խճի և ավազի հումք ուսումնասիրելու նպատակով:

Փորձնական բացահանքերից բլոկների արդյունահանման ընթացքում առաջացած բազալտի ջարդոնից, կտորտանքից կազմվելու է ևս 2 համախառն նմուշ մոտ 50 կգ քաշով, որով նախատեսվում է ուսումնասիրել բլոկների արդյունահանման թափոնների պիտանելիությունը շինարարական խճի և ավազի ստացման համար:

Լաբորատոր հետազոտությունների համար օգտակար հանածոյի քիմիական կազմը կորոշվի ըստ 6 նմուշների անալիզի (3-ական յուրաքանչյուր տեղամասից):

Ֆիզիկամեխանիկական հատկանիշներն ուսումնասիրվելու են 144 հորատահանուկային և 4 համախառն նմուշներով (2-ը՝ փուլտա շերտից, 2-ը՝ բլոկների արդյունահանման թափոններից):

Քարաքանական և միներալոգական ուսումնասիրությունները կատարվելու են 6 հղկուկների միջոցով:

Հետագա արդյունահանման տեխնիկատնտեսական հաշվարկների համար ելակետային տվյալներ ստանալու նպատակով կորոշվի փորձնական բացահանքերի լեռնային զանգվածից բլոկների ելքը:

Դաշտային պայմաններում 2 տեղով կորոշվի նաև օգտակար հաստվածքը ծածկող ապարների ծավալային զանգվածը:

Լեռնային զանգվածից պիտանի բլոկների ելքի տոկոսի որոշման համար նախատեսվում է տեղամասի սահմաններում 2 փորձնական բացահանքերի անցում: Յուրաքանչյուր բացահանքի չափերն ընդունվում են՝ 10 մ x 3.0 մ x 4.0 մ, արդյունահանված ծավալը կազմվելու է 120 մ³, որից 45 մ³ փուլտա շերտն է և 75 մ³ չհողմնահարված, թարմ բազալտներ:

Թարմ բազալտներից կկատարվի փորձնական հանույթ պիտանի բլոկների ելքի որոշման համար, իսկ փուլտա շերտից և բլոկների արդյունահանումից առաջացած ջարդոնից կազմված նմուշները փորձարկվելու են որպես հումք շինարարական խճի և ավազի ստացման համար: Փորձնական արդյունահանման աշխատանքները կատարվելու են մեխանիկական հարատասեպային եղանակով՝ օգտագործելով բուլդոզեր և էքսկավատոր:



-իրականացվելու է տեխնիկայի և ավտոմեքենաների շարժիչների կարգավորում, ինչը կնվազեցնի մթնոլորտ արտանետվող գազերի քանակը:

Երկրաբանական ուսումնասիրության ընթացքում իրականացնելու են շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

-մթնոլորտային արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ շաբաթական մեկ անգամ, 24 ժամ տևողությամբ,

-հողային ծածկույթի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ ամսական մեկ անգամ,

-վայրի բնության, կենսամիջավայրի, Կարմիր գրքում ընդգրկված էնդեմիկ տեսակների մշտադիտարկումներ,

- հայցվող տարածքում հորատման աշխատանքների իրականացման ընթացքում աղմուկի և թրթռման մակարդակի վերահսկողություն,

Շրջակա միջավայրի մոնիթորինգի իրականացման համար ընկերությունը նախատեսել է տարեկան 780.0 հազ. ՀՀ դրամ:

Պատճառաբանական մաս. Օրենսդրությամբ սահմանված կարգով՝ փորձաքննության գործընթացում Կոտայքի մարզի Աբովյան համայնքի Մայակովսկի բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում անցկացված հանրային լսման ընթացքում գործունեության իրականացումը տեղական ինքնակառավարման մարմնի և հանրային լսման մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

Հաշվետվության վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ ներքին գործերի, առողջապահության, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, պաշտպանության նախարարություններից, կադաստրի կոմիտեից, Կոտայքի մարզպետարանից, Աբովյանի համայնքապետարանից ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից:

Ամփոփելով հաշվետվության բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք կառաջանան նախատեսվող գործունեության աշխատանքների իրականացման արդյունքում, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմերի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

Փորձաքննական դրական եզրակացություն տրվում է երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների համար, ինչը որևէ կերպ չի կարող ենթադրել հետագա արդյունահանման աշխատանքներին դրական եզրակացության տրամադրումը:

Փորձաքննական պահանջներ

- Երկրաբանահետախուզական աշխատանքների իրականացման ընթացքում պարբերաբար իրականացնել շրջակա միջավայրի բաղադրիչների մոնիթորինգ և արդյունքները, Կառավարության 2018 թվականի փետրվարի 22-ի N191-Ն որոշմամբ սահմանված ժամկետներում և ձևաչափով, ներկայացնել շրջակա միջավայրի նախարարություն:



- Երկրաբանահետախուզական աշխատանքների իրականացման ընթացքում խստագույնս հետևել գնահատման հաշվետվությունում ամրագրված բնապահպանական միջոցառումների իրականացմանը, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ապահովելով բնապահպանական նորմերը:
- Ապահովել հայտով նախատեսված ռեկուլտիվացիայի աշխատանքների իրականացումը:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«ԿԱՐԾՐԱՔԱՐ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Կոտայքի մարզի Բալահովիտի բազալտի հանքավայրի Հարավային տեղամասի երկրաբանական ուսումնասիրության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար՝



Սևակ Մարկոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝

Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝

Հովիկ Մեսրոպյան